

## ԳՈՅԱՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Հասարակական, քաղաքական կյանքի, գիտության, մշակույթի և այլ ոլորտների մերօրյա տարաբնույթ ու տարընթաց արագ զարգացումներում, լեզվական գործոն ներթափանցումների, ազդեցությունների և փոխազդեցությունների արդի պայմաններում բառարան-տերմինարանները դառնում են հրատապ անհրաժեշտություն. առանց դրանց հնարավոր չէ ինչպես դարին ու ժամանակին համահունչ զարգացում, այնպես էլ սերտ կապի պահպանում ավանդաբար արդեն ձևավորվածի հետ: Բայց հենց այստեղ էլ, մանավանդ լեզվագործածության հաճախ անկանխատեսելի մեր վայրիվերումներում, գլուխ է բարձրացնում տագնապը տվյալ բառարանը կամ տերմինարանը ապահովելու է ակնկալվող նպաստը տվյալ ոլորտի առաջընթացի՝ն, անհրաժեշտ հասկացությունների ու տերմինների տարածմանը, թե՛ խճողելու է արդեն եղածն էլ. խոչընդոտելու է մեր լեզվի գործառնական ու կառուցվածքային զարգացմանը լեզվի տվյալ հատվածը դարձնելով որևէ օտար լեզվի խեղճուկրակ կցորդը:

Այս համապատկերի վրա և մտահոգությունների այս ծիրում միանգամայն հաճելի անակնկալ է կենսաբանական գիտությունների թեկնածու, արդեն բառարաններ հեղինակած Ֆ. Հայրապետյանի «Գոյապահպանություն» բացատրական բառարանը, որ կազմված է տերմինարանի սկզբունքով, պարունակում է գոյապահպանությանն ու դրան առնչվող գիտությունների շուրջ 2000 տերմին ու հասկացություն, որոնք համարակալված են այբբենական կարգով և սեղո բացատրված են, սահմանված: Առանձին ցանկերով տրված են տերմինների ռուսերեն և անգլերեն համարժեքները:

Դեռևս չիրատարակված շարադրանքի առաջին իսկ ընթերցումից հետո սիրով հանձն առա բառարանի խմբագրումը, որովհետև այն չափեկանորեն տարբերվում է նմանատիպ շատ աշխատանքներից թե մոտեցմամբ, թե սկզբունքների կիրառությամբ, թե որակով և զալիս է համալրելու մեր հաջողված տերմինարանների շարքը: Այն իսկապես կարող է շատ օգտակար լինել, ինչպես նշվում է բառարանի հակիրճ բնութագրականում, գոյապահպանության մասնագետներին, կենսաբաններին, աշխարհագրագետներին, ճարտարապետներին, գյուղատնտեսներին, թարգմանիչներին, լրագրողներին, ուսանողներին, շրջակա միջավայրի պահպանության խնդիրներով հետաքրքրվողներին:

Ակնհայտ է հեղինակի հիմնական նպատակադրումը. նա չի ընտրել հեշտ ճանապարհը վերցնել որևէ օտարլեզվյան բառարան, առանձնացնել, ընտրել համապատասխան տերմիններն ու բացատրությունները, մասամբ թարգմանել, մնացածներն էլ նույնությամբ փոխադրել հայերենի մեջ որակելով «միջազգայիններ»: Ընդհակառակը, նա ձգտել է ամբողջ նյութը հանգամանորեն մշակել և ոչ միայն հանրությանը ներկայացնել գոյապահպանության տերմիններն ու դրանց սահմանում-բացատրությունները, այլև ստեղծել, համակարգել ու ամրակայել տվյալ բնագավառի համար հայերեն, հայաշունչ ու հայեցի տերմինակազմ, իսկ բացատրություններն ու սահմանումները տալ ինքնու-

րույն, հնարավորինս ճշգրիտ, սեղմ, մատչելի ձևակերպումներով ու կառույցներով: Դա հիմնականում հաջողվել է: Հենց վերնագրում **էկոլոգիայի** փոխարեն **գոյապահպանություն** անվանումն է, որ սկզբունքային է տվյալ գիտականագի ու բնագավառի համար: Իսկ բառարանի մեջ նույն սկզբունքայնությամբ բառահոդվածի երաշխավորվող անվանումներ են դարձել, մի կողմից, բազմաթիվ տարածված տերմինների հայերեն համարժեքները (պոպուլյացիա, էնդեմիզմ, բոնիտետ, ասոցիացիա, գրունտ, պրոդուցենտ և այլն) փոխարեն տեղախումբ, տեղաբնակություն, որակում, զուգակցություն, հիմնահող, արտադրող և այլն), մյուս կողմից քիչ հանդիպող, բայց հանրությանը ոչինչ չասող ու չհուշող ալելոպաթիայի, միկորիզայի, էնտոմոխորի, տամնոբիոնտի, մետեոպաթիայի, հալոքսերոֆիտի, նոոսֆերայի, հիդրոպոնիկայի, աերոպոնիկայի և այլնի փոխարեն փոխազդեցախտ, սնկաբնակություն, միջատացիր, թփաբնակ, օդերևութաճարակ, աղաչողաբույս, մտուրտ, ջրաբուծում, օդաճեցում և այլն: Դրանց թիվն անցնում է մի քանի հարյուրից, և շատերն առաջին անգամ են կիրառվում:

Ճշգրտության, նրբմաստի հաղորդման, բարեհնչության, կարճության, կապակցելիության ու զործունության վերաբերյալ պահանջները Ֆ. Հայրապետյանը զուգակցել է ներհամակարգային և արտահամակարգային կապերի, փոխհարաբերությունների, կայուն համակարգումների պահանջներին:

Հնարավորինս միօրինակացվել է բարդ տերմիններում հաճախակի հանդիպող օտար բաղադրիչների փոխադրումը: Օրինակներ ֆիտ բույս (օմբրոֆիտ—անձրևաբույս, տերոֆիտ—ամառնաբույս, աերոֆիտ—օդաբույս և այլն), ֆիլ սեր (հիդրոֆիլ—ջրասեր, հալոֆիլ—աղասեր, փսամոֆիլ—աժաղասեր և այլն): Այսպես նաև խոր շարժ(ում), տարած(ում), ցիր, ստեմո նեղ, փոքր, բիոնտ բնակ և այլն:

Նույն պահանջներով ու սկզբունքներով է առաջնորդվել հեղինակը բառակապակցությամբ արտահայտված տերմինների կազմության ու բացատրության դեպքերում նկատի ունենալով նաև հետագայում միաբառ դառնալու հնարավորությունը (միջավայրաբանական երկրաբանություն, միջավայրաբանական երկրածնաբանություն, վարջաբանական ստորակարգություն, ջրային հաշվեկշիռ—ջրահաշվեկշիռ և այլն):

Որոշ միջազգային տերմիններ, որոնք հանդիպում են նաև մեր մամուլում ու մասնագիտական գրականության մեջ, հանրաճանաչ են կամ բնորոշ չեն մեր երկրի ու պայմանների համար, թողնվել են անփոփոխ (աբիսալ, ալբերդո, ալբերգիա, դևաստացիա և այլն), որոշ տերմիններ էլ պատճենված են մասնակիորեն (արևաէներգետիկա, կենսակլիմա, տարեկան սուբցեսիա, գեոբոտանիկ շերտ, վեգետացիայի ժամանակաշրջան և այլն):

Արդեն հայերեն հայտնի առանձին տերմինների նկատմամբ ևս հեղինակը ցուցաբերում է նոր մոտեցում առաջարկելով առավել դիպուկ ու հաջող տարբերակը (ասենք **էպիֆիտը** մակաբույսն է, բայց **մակաբույսի** հետ նմանահնչությունը և հնարավոր շփոթությունը վերացնելու համար առաջարկվում է **բուսակյացը**, կամ սպեկտր—լուսակ > տարրապատկեր և այլն):

Նկատելի է նաև, որ երբեմն էլ հեղինակը, կողմնակից լինելով հայերեն տարբերակին, դրան տեղ է հատկացրել միայն փակագծում ռեսուրս (պա-

շար), ակցելեռացիա (արագահասունություն) ընթերցողին թողնելով հետագա ընտրության տարբերակը կամ տարբեր հանգամանքներում ու զուգորդումներում նրբիմաստները պահպանելու հնարավորությունը:

Իհարկե, աշխատանքն անթերի չէ, և մեզանում նոր ձևավորված ու արագ զարգացող գիտակարգում ու բնագավառում այսօր դա հնարավոր էլ չէ: Կարելի է, անշուշտ, հեղինակից պահանջել, որ մի քիչ էլ համարձակ լիներ, մի շարք գործածվող օտարլեզվյան տերմիններ ևս հայերեն համարժեքներով արտահայտեր, մասնակի պատճենվածների փոխարեն առաջադրեր ամբողջությամբ հայացված տարբերակներ, ներառեր նոր տերմիններ ու հասկացություններ մեծացնելով քանակը: Բայց Ֆ. Դայրապետյանի բառարանի գիտական պատշաճ մակարդակը, լեզվական որակը, տարբեր սկզբունքների ճիշտ և կայուն, ներդաշնակ համադրումը, գիտության արդի մակարդակին համապատասխանող պահանջների հաշվառումը թելադրում են ավելի շատ հորդորանքի խոսքեր ասել բառարանագրությամբ զբաղվող մեր մյուս մասնագետներին՝ որդեգրելու նման մոտեցումը և մեզանում անվերապահորեն ամրակայելու այդ պարզ ճշմարտությունը՝ տերմինարանները սոսկ բառերի և սահմանումների հավաքածու չեն, առավել ևս մասնաթարգմանություն, դրանց ստեղծումը պահանջում է ոչ միայն խոր ու բազմակողմանի գիտելիքներ, մասնագիտական հմտավարժություն, լեզուների տիրապետում ու բարձրակարգ լեզվագագացողություն, այլև մայրենիի մաքրության, նրա բնականոն զարգացման ու գործառության նկատմամբ մեծ սեր ու պատասխանատվություն: Դա է հաջողության գրավականը:

ԵՎԵՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու